

# ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**ՓՈՂԱՅԻՆ ԱԽՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ (ՊԱԹՈԼՈԳԻԱՅԻ)**

**ԱՄԱՆՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:**

**ԱՆՁԻ ՓՈՂԱՅԻՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

## ՄՈՅՑԱ ՕՀՄՆՅԱՆ

**Առատությունը հիվանդություն է, որը փողով չի բռնժում:**

(Ճապոմական իմաստություն)

Փողը ոչ միայն հատուկ ապրանք է, արժեքի չափ, տնտեսական փոխանակման ու շրջանառության, վճարման ու կրատկումների կազմավորման հիմնական միջոց, այլև սոցիալ-հոգեբանական բարդ երևույթ, որն ազդում է մարդու գործունեության դրդապատճառների և արժեքային կողմնորոշչների վրա: Փողը ոչ միայն տնտեսագիտական կատեգորիա է, տնտեսական գործունեության լծակները շարժման մեջ դնող գործոն, այլև սոցիալ-մշակութային, աշխարհայացքային-արժեքային, հոգեբանական երևույթ, որի ուսումնասիրությամբ գրաղում է տնտեսական հոգեբանությունը<sup>1</sup>:

Փողի հոգեբանությունը տնտեսական հոգեբանության բացառիկ կարեւորություն ունեցող թեմաներից է, որը, սակայն, թիւ է մշակված: Մետաղադրամների ու բրադրամների ընկալման, փողի հանդեպ ճարդվանց վերաբերմունքի, ինչպես նաև փողի վերաբերյալ համոզմունքների ու վարքի ծագման մասին մի շաբթ տեսություններ և ուսումնասիրություններ գոյություն ունեն, սակայն փողի հոգեբանության վերաբերյալ տրամադրեն հետեւողական միասնական տեսություն կամ ուսումնասիրություն դեռ չկա: Փողի հոգեբանության հիմնահարցերով գրաղվող արևածյան շատ հեղինակներ նշում են, որ թեման և հասարակության մեջ, և գիտական շրջանակներում քննարկվում է ծայրահեղ տհաճությամբ: Եսկ հոգեբերապետներն ընդհանրապես ջանում են դրանից խուսափել՝ հիմնականում սահմանափակվելով փողային խանգարումների ավանդական մի քանի ձևերի (ճողախաղեր, գողանողություն (կլեպտոնանիա), բնազդային գնումներ) վերլուծությամբ:

<sup>1</sup> Տնտեսական հոգեբանությունը, որպես զիանիքի հասուկ բնագավառ և ամենից առաջ որպես կիրառական գիտաճյուղ, ծևալորվել է Արևմտաքում XX դարի սկզբներին: Այդ գիտաության զիսավոր նպաստակը ապրանքաշուկայական հարաբերությունների պայմաններում անձի վարքի առանձնահատկությունների բացահայտման է: Տնտեսական հոգեբանության հիմքում դրված է անտեսական մարդու (homo economicus) դրամական մոդելը, որը ձգաւում է առավելագույն սեփական օգուստի, մեղունում է ինքնուրույն որոշումներ՝ ելեկով իր պահանջմունքների իմացությունից և դրանց բավարարման մասին աղեկասավորյությունից:

Ֆինանսադրամական ոլորտում կատարվող հոգեբանական ուսումնասիրությունների մեծամասնությունը ցույց է տալիս, որ փողի նկատմամբ մարդկանց վերաբերունքը տրամաբանորեն ամենեին էլ հիմնավորված չէ<sup>2</sup>: Այն, թե նրանք ինչպես են փող վաստակում, ծախսում, խնայում, պարտը վերցնում և նվիրում, երբեմն լիովին հակասում է տնտեսագիտական բոլոր պատկերացումներին: Մարդիկ տնտեսական օրենքների շիմացության պատճառով հաճախ են սխալվում, իսկ ներոգների ու կախվածությունների դեպքում գործում են ի վեաս իրենց:

Փողի հոգեբանության ոլորտում ժամանակակից արևմտյան ուսումնասիրությունները կարելի է պայմանականորեն բաժանել մի շարք ուղղությունների<sup>3</sup>, որոնց թվում առանձնանում է փողի հետ կապված հոգեկան խանգարումների ուսումնասիրությունը:

Հայաստանի Հանրապետությունում փողի հոգեբանության ուսումնասիրությունը նոր է սկզբունք<sup>4</sup>: Այս ոլորտում հետազոտություններ կատարելու համար լայն դաշտ է բացվում, քանի որ անցումը շուկայական տնտեսությանը, ընդհանուր գծերով, կարելի է կայացած համարել: Այդ անցման հետևանքներից մեկն էլ այն է, որ յուրաքանչյուր բնակչի կյանքում փողը շատ ավելի կարևոր տեղ է զբաղեցնում, քան 20 տարի առաջ եր, ավելի ճիշտ՝ այդ դերը շատ ավելի ծանրակշիռ է, քան տնտեսապես զարգացած արևմտյան երկրների բնակիչների համար: Մեր երկրում տեղի ունեցող տնտեսական ճգնաժամը (որի հետևանքը բնակչության զգալի մասի սոցիալական թշվառացումն է) ցույց է տալիս, որ արևմտյան հոգեբանների այն պնդումը, թե փողը երջանկություն չի բերում, ճիշտ է միայն հարուստ երկրների համար: Հետաքրքրական է նաև մեկ այլ հետևություն. արևմտյան զարգացած երկրներում փողի հանդիպ առավել անտարել են միջին դասի ներկայացուցիչները: «Դա նշանակում է, որ Հայաստանում՝ մի երկրում, որն ունի զարգացած միջին դաս, և որտեղ վերին ու ստորին սոցիալական խավերի միջև ավելի ու ավելի է սրվում խզումը, փողային ախտերը և փողի հետ կապված հոգեբանական խնդիրները շատ տարածված են: Եվ «դարի հիվանդություններից» մեկի՝ ընկճախտի (դեպրեսիա) բացահայտմանը կարող է հաջորդել հոգեբանների ու հոգեբանական կողմից «փողային խելագարության» բազմազան տեսակների բացահայտումը»:

Փողը շրջապատված է մեծարանակ պարադրսներով, ստով, անհեթերություններով ու կեղծիքով: Զկայացած շուկայական հարաբերություններում մարդն անընդհատ խարված լինելու մտավախություն ունի. նա չի ստանում այն և այնքան, ինչի համար և որքան վճարում է: Գործարքների

<sup>2</sup> Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Հ. Արածանյան, Ուսցիոնալի և իռացիոնալի փոխհարաբերության հարցի շուրջ, «Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի», 2005, թիվ 3, էջ 37-53:

<sup>3</sup> Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Փենքո Ա.**, Проблема деңег в зарубежных психологоческих исследованиях, «Психологический журнал», 2000, том 21, N 1, էջ 50-62:

<sup>4</sup> Տե՛ս **Ս. Օհանյան**, Փողի հոգեբանություն: Փողը սոցիոմշակութային արժեքների համակարգում, «Հանրապետական երիտասարդական զիտաժողովի նյութեր» (նվիրված Վանական պետական մանկավարժական ինստիտուտի հիմնադրման 40-ամյակին), Վանաձոր, 2009, էջ 107-116:

ժամանակ ազնվություն կոչվածք դառնում է պայմանական և երկրորդական գործոն: Փող ունենալ ցանկացողներին հաճախ ստորացնում ու վախեցնում են փող ունեցողները: Հարստության նկատմամբ վերաբերմունքը դառնում է և հարգալից, և արգահատական: Փողը դառնում է արգահատելի, եթե ձեռք է բերվում խարդախությամբ, բռնությամբ, բայց և ցանկալի ու գնահատելի, եթե ձեռք է բերվում ազնիվ աշխատանքով: Նման հասարակություններում փողը հաճախ մարդու նշանակալիության անմիջական գործակից է համարվում: Երբեմն եկամուտների և երջանկության միջև դիտվում է ուղղակի կախվածություն<sup>5</sup>:

Հասարակության մեջ փողի հետ կապված հոգեկան խանգարումների քանակի մասին որևէ հստակ թիվ ասելը դժվար է, որովհետև վիճակագրական տվյալներ չկան: Բացառիկ դեպքերն այնքան արտահայտիչ ու հիշվող են լինում, որ դրանց հաճախականությունը կարող է գերազնահատվել: Բայց քանի որ այս ոլորտում ուսումնասիրությունները չափազանց քիչ են, փողային լուրջ ներողների իսկական տարածվածությունն իրականում կարող է բերազնահատվել:

Մարդարանները, սոցիալական հոգեբանները և սոցիոլոգներն առաջարկում են փողի հետ կապված ախտաբանության մի քանի բացառություն:

1. *Անմաքուր ճանապարհով ձեռք բերված փողի և սեփական խղճի միջև տեղի ունեցած բախումը.* ինքնախարազանումը և զղումը հաճախ տարօրինակ վարք են պարտադրում այն մարդկանց, ովքեր դաստիարակվել են այն հանողմամբ, որ հեշտ ճանապարհով ձեռք բերվող և հրապարակայնորեն ցուցադրվող չափազանց «մեծ փողերը» վկայում են մարդու մեղավորության մասին:

2. *Սիցիսմրային մրցակցությունը.* աղքատների հանդեպ հարուստների անտարբերության, արհամարհանքի, հազվադեպ՝ խղճահարության և հարուստների նկատմամբ աղքատների նախանձի ու ատելության մասին պատկերացումները ծնում են միջիսմրային բազմաթիվ բախումներ: Անվտանգությանը, կարգավիճակին ու հեղինակությանը սպառնացող վտանգը կարող է դառնալ հոգեկան տազմապի և դա փողի օգնությամբ վերահսկելու փորձերի հզոր աղբյուր:

3. *Վաղ մանկության ապրումները.* մանուկ հասակում ապրած աղքատությունը, տնտեսական ճգնաժամը կամ ակնհայտ (շրջապատողների համեմատությամբ) տնտեսական դժվարությունները ունանց համար դառնում են մեծ կապիտալների կուտակման խթաններ: Հենվելով կլինիկական փորձերի վրա՝ անգիտացի հոգեբան Ա. Մերյուզը ենթադրում է, որ փողային վարքն ու դիրքորոշումները վաղ մանկության հուկական դինամիկայի հետևանքն են (փոխհարաբերությունները ծննդների, ընկերների, ուսուցիչների ու հարեւանների հետ, մշակության ու կրոնական ավանդույթները, ժամանակակից տեխնոլոգիաների և լրատվամիջոցների ազդեցությունը): Նրա դիտարկումների համաձայն՝ փողային շատ խանգարումների արմատներն ընտանիքում են: Ծննդները փողի օգնությամբ արտահայտում

<sup>5</sup> Տե՛ս Շեպտүն Ա., Философия денег, "Вопросы философии", 1999, N 7, էջ 180-183:

Են իրենց զգացմունքները երեխաների հանդեպ՝ խրախուսելով նրանց լավ սովորությունները և դպրոցական հաջողությունները: Փողի վերաբերյալ ընտանեկան սպասումները սովորաբար միաժամանակ լինում են բացահայտ ու բարուն, հաճախ՝ անհետևողական ու խճճված: Որոշ երեխաներ ծնողների սպասումներին պատասխանում են լրիվ հակադիր վարքով, ինչն արդարացի է նաև փողի կապակցությամբ: Գերխնայող ծնողների երեխաները կարող են դառնալ վատնող ու անհեռատես: Որոշ երեխաներ փորձում են ֆինանսական առումով գերազանցել ծնողներին: Մյուսները թվում են կատարելապես անտարբեր և ասես «ոչ այս աշխարհից»: Նրանց վերաբերմունքը փողի նկատմամբ ենթադրում է, որ իրենք դրան արժանի չեն: Բնականաբար, նա, ով կարծում է, թե արժանի չէ իր աշխատանքի համար արդարացի վարձատրության, չի էլ ստանում դա:

Հենվելով այդ մեկնաբանությունների վրա՝ 1978 թ. Հ. Գոլդբերգն ու Ռ. Լյուիսն առանձնացրին հոգեբանական մի շարք գործուներ, որոնք կարող են փողային ոլորտում լուրջ խնդիրների հանգեցնել: Դրանք են.

ա) խաղաղանոլի՝ ժամանակին կանգ առնելու անկարողությունը և տանոլ տվածը հետ բերելու հույսը,

բ) ազահությունը, վախը, նախանձը, զայրույթը,

գ) սխալ ինքնազմահատականը, բավարարվածությունն ու գոհությունը սեփական վիճակից,

դ) ազնվությունը՝ որպես հանուն շահի որոշ սկզբունքներ գոհաբերելու անընդունակությունը,

ե) կարեկցանքը, խղճահարությունը և հոգատարությունը, որոնք կարող են հանգեցնել սխալ տնտեսական որոշումների,

զ) հակվածությունն ավանդույթներին, որոնք մարդկանց ստիպում են զբահատել հարստությունը և չձգտել դրան:

Հոգեվերլուծական ավանդույթի շրջանակներում հատուկ ուշադրություն է դարձվում նաև մարդու վարքի ենթագիտակցական շարժառիթներին և փողի հանդեպ վերաբերմունքի ախտածին ձևերին: Ընդգծվում է, որ մարդու վարքը կարող է հակադրվել նրա իսկական շարժառիթներին կամ ցանկություններին՝ նպատակ ունենալով քողարկելու դրանք: Այսպես՝ աղքատների հանդեպ խղճահարությունն իրականում կարող է քողարկել ատելությունը, սոցիալական նախապաշարումները և տագնապի զգացումը: Աղքատները հարուստների համար միշտ հոգեբանական ու տնտեսական սպասնալիք են ներկայացնում, և վերջիններս նրանց ջանում են ներկայացնել կեղոտոտ, անազնիվ ու իրենց վիճակին արժանի: Հենվելով դիտարկման մերողի ու հիվանդության պատմությունների վերլուծության վրա՝ Գոլդբերգն ու Լյուիսն առաջարկեցին անձի այնպիսի տիպաբանություն, որում փողը զուգորդվում է հետևյալ զիսավոր խորհրդանշանային գործուների՝ իշխանության, սիրո, անվտանգության, ազատության ու ինքնարտահայտման հետ: Ըստ այդմ՝ առանձնացվում է, այսպես կոչված, «փողային խելագարության»<sup>6</sup> 4 տեսակ<sup>6</sup>.

<sup>6</sup> Տե՛ս Փсихология. Учебник для экономических вузов /под общ. ред. В. Н. Дружинина/. СПб., 2000, т. 491:

- «Անվտանգության ճգողողներ»: Հանուն անվտանգության փողի ճգողող մարդկանց՝ վիրավորված կամ արհամարհված լինելու վախը վերածում է թալանված լինելու պարանոիդալ զաղափարի. նրանք չեն վստահում ուրիշներին և փողն օգտագործում են մյուս մարդկանցից հնարավոր կախվածության հետ կապված իրենց տագնապի աստիճանը նվազեցնելու համար:

- «Խշանության ծարավներ»: Այս կողմնորոշվածությամբ մարդկանց համար փողն ուժ է, ինչպես նաև իրենց և սպառնացող աշխարհի միջև պատմեշը հաղթահարելու միջոց: Նրանք փողը դիտարկում են որպես ուժ, վերահսկողություն և իշխանություն. ֆինանսական կորուստները նրանց համար նշանակում են անզորություն և նվաստացում<sup>7</sup>:

- «Միրո առևտրականներ»: Այս խմբին պատկանող մարդկանց համար փողը սիրո խորհրդանիշ է: Այստեղ սոցիալական փոխանակման գործընթացները խախտված են և նույնացված սեր ու ընկերություն գնելու կամ վաճառելու հնարավորությանն ու անհրաժեշտությանը, փողն ու նվերները որպես սիրո նշաններ օգտագործելուն: «Միրո առևտրականները» զուգահեռ են անցկացնում սիրո և փողի միջև, ընդ որում՝ կամ փողն է խորհրդանշում սերը, կամ փողն ինքնին սեր է, կամ սերը դառնում է սպառնան առարկա, որը կարելի է գնել ու վաճառել:

- «Խճճուրոյնության երկրպագուներ»: Նրանք փողն օգտագործում են ազատության ու անկախության հասնելու համար: Փողը կարող է հանդես գալ որպես ուրիշներից ազատվելու և նրանց իշխելու միջոց<sup>8</sup>:

Փողը կարող է հուզական տարրեր նշանակություն ունենալ<sup>9</sup>: Դրանցից է մեղքի զգացումը, որը կապված է ճգնակեցության ու ինքնահրաժարման պորխտանական (մաքրակրոնական) <sup>10</sup> արժեքների հետ: Մաքրակրոնները

<sup>7</sup> Այդ մասին տես նաև **Фромм Э.**, Психология и религия; Искусство любить; Иметь или быть. М., 1998:

<sup>8</sup> Փողի՝ տնտեսական համակարգի կառուցվածքային կարևորագույն բաղադրատարրերից մեկի նշանակությունը ՀՀ քաղաքացիների համար պարզելու համար 2009 թ. ապրիլին Հայաստանի պետական տնտեսագիտական համախարանի, Կրթության միջազգային ակադեմիայի ուսանողների, ՀՀ բնակչության տարրերի խավերի շրջանում անցկացվել է սոցիոլոգիական հարցում: Հարցմանը նաևնակեցել է միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն, ընտանեկան ու սոցիալական տարրեր կարգավիճակներ ուսւցող 17-60 տարեկան 100 ռեսպոնդենտն: Փողի երթյան հարցը պարզաբանելիս հարցվածների 73%-ն այն կարծիքն է, որ դա բարեկեցության (հարմարավետության) ապահովման միջոց է, 14%-ի համար փողն առևտրային արժեք է, 8%-ն այն ընկալում է որպես հաջողակության շահուրոշիչ, 5%-ի տեսանկյունից փողը բարյալական չարիք է: Այն հարցին, թե ֆինանսական կողմից բացի, փողը հոգեբանական ինչ վիճակ է ապահովում, 34%-ը նշել է, որ դա իրեն ազատ ու անլուներից անկախ զգալու, նրանց իշխելու աղբյուր է, 26%-ը փողին որպես միջոցի է վերաբերություն (որից 22%-ը՝ գոյատևման ու ապրուսի, 2%-ը՝ համելի ապրելու, 2%-ը՝ բարեկործության), 16%-ի համար փողն ուժ է, որը չունեին նախկինում, 13%-ին փողի առևտրայինը հնարավորություն է տալիս իրենց անվտանգ ու ապահով զգալու, իսկ 11%-ը կարծում է, որ փողն առը ու վաճառքի առարկա է դարձնում ասեն ինչ:

<sup>9</sup>Տ՛ն Սամսին Ա., Основы философии экономики. М., 2003, էջ 176-179:

<sup>10</sup> «Պորխտանություն» հասկացությունն ունի 2 ըմբռնում: Լատ առաջինի՝ պորխտաններ են անզիւական բողոքականները, որոնք առաջնորդվում են պահանջմանը բավարարման ժողովադրյան սկզբունքը: Երկրորդ ըմբռնամբ պորխտանությունը համարվում է մաքրակրոնության, ճգնապարականության, խստակեցության հոմանիշը: Հողվածում հասկացությունը գործածվում է երկրորդ իմաստով:

քարոզում են ցանկությունների, ավելորդ ծախսերի ու հավելյալ սպառման մեղսալիությունը: Բարեխսդության, ճշտապահության, խնայողության ու չափավորության իդեալն այդ ավանդույթների շրջանակներում դաստիարակված մարդկանց պարտադրում է մեղավոր զգալ ոչ թե կուտակման, այլ հատկապես փողի վատնման համար: Մաքրակրոնությունը հակադրվում է ոչ թե փողին ընդհանրապես կամ աշխատանքի դիմաց արդարացի վարձատրությանը, այլ չափազանց հեշտ (շահած կամ ժառանգած), անազնիվ ճանապարհով ստացված փողին, հատկապես՝ փողի չափազանց հեշտ ծախսմանը: Փողի հետ կապված մեղքի զգացումը կարող է առաջացնել ընկճախտ, անվտահություն և նոյնիսկ արհամարհանք սեփական անձի վերաբերմամբ:

**Հաջորդն անվտանգության** զգացումն է: Self-made man (կյանքում ամեն ինչի ինքնուրույն հասած) կատեգորիային պատկանող շատ հարուստ ամերիկացիների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ իրենք «սովորական» մարդկանցից ավելի հաճախ են ստիպված եղել ապրել անհաջող կյանքով, տարել են ծնողների մահը, ապահարզանը և այլն, որոնք հանգեցրել են հոգեկան խաթարումների: Մեծանալով, ըստ հոգեվերլուծաբանների ենթադրության, այդ մարդիկ փող են կուտակում, որպեսզի այլևս երեք շիայտնվեն ծանր վիճակում: Նրանց համար հարուստ լինելու ցանկությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ անվտանգության պահանջմունք՝ վաղ տարիքում առաջացած ինքնատիպ հուզական սովին հագուրդ տալու համար: Հոգեվերլուծաբանները թվարկում են մաքրակրոնական (պորխտանական) ավանդույթներով դաստիարակված այցելուների շրջանում դիտվող հարստության հանդեպ վախի կյանիկական դեպքեր: Այդ վախի հիմքը, հավանաբար, վերահսկողությունը կորցնելու մտավախությունն է: Փողը վերահսկում է մարդուն. թելադրում է, թե որտեղ ապրի նա և ում հետ շփվի, սահմանափակում է սոցիալական ակտիվությունը ոչ պակաս, քան նպաստում է դրան: Եթե փողը չափազանց շատ է, այն խսորեն վերահսկելու ինաստ չունի: Այդ պատճառով հարուստ մարդը հեշտությամբ կարող է կորցնել ինքնատիրապետումը: Իսկ ինչպես արտաքին հանգամանքների, այնպես էլ սեփական հոլոգերի վերահսկումը ստեղծում է անվտանգության պատրաճը:

Տագնապի հաղթահարման ու անվտանգության ձեռքբերման նպատակով փողի օգտագործումը հանգեցնում է օտարման, քանի որ մարդը չի դիտարկվում որպես անվտանգության հնարավոր աղբյուր: Իր շուրջը հուզական պատ կառուցելով՝ նա սկսում է տառապել սարսափից ու հետապնդման երկյուղից՝ վախենալով կողոպտիչներից, քշնամիներից կամ ֆինանսական սնամելացումից: Փողի մեջ անվտանգություն փնտրողը հարստության անընդհատ աճի կարիք ունի:

Առանձնացվում է մարդկանց մի քանի տեսակ, որոնց համար փողն անվտանգության խորհրդանիշ է.

*ա. Ժլատներ:* Նման մարդկանց համար փողի տնտեսումն ինքնին արժեք է: Նրանք իրենց զրկում են ամեն ինչեց, և այդ գործընթացը, անկախ կուտակման քանակից, ապահովում է անվտանգության, պաշտպանվածության զգացում: Ժլատներին բնորոշ են փողի կուտակման անսանձ

կիրքը, նյութական միջոցները կորցնելու վախի զգացումը: Նրանցից շատերը կարող են նույնիսկ հիվանդանալ՝ զրկելով իրենց լավ սննդից, բավարար ջերմությունից ու լուսից: Նրանց մեջ հանդիպում են և՝ աղքատներ, և՝ հարուստներ, հաճարեղ ու միջակ մարդիկ, մտավորականներ ու աշխատավորներ:

*թ. Ծգնավորներ:* Նրանք ևս խնայող են, բայց հաճույք են զգում ինքնազապումից ու ցուցադրական աղքատությունից: Նրանք կարող են նույնիսկ ոչ մեծ գումարներ ծախսել մյուսների համար՝ ընդգծելու համար իրենց «մարտիրոսությունը»: Հոգեվերլուծաբանները նշում են, որ նրանց վարքը հաճախ քողարկում է նախանձը, զայրույթը և թշնամանքն ավելի հարուստների հանդեա:

*գ. Վաշխառումներ:* Չեն բաժանվում փողից, քանի դեռ իրավիճակն «հիդեալական» չի դարձել, և այդ ժամանակ ուրախությամբ ծախսում են փողը: Ողջ հետաքրքրությունն ուրիշներին խարելն է՝ և վաճառողներին, և ապրանքը լրիվ գնուվ գնողներին: Հաղթանակի զգացումը հաճախ քավում է իրականում անպեսոք իրի ձեռքբերման ոչ ռացիոնալությունը:

*դ. Հավաքողներ:* Մոլեռանդությամբ հավաքում են ամենատարբեր իրեր, որոնցից շատերն իրականում ոչ մի արժեք չունեն: Նյութական առարկաների տնօրինումը նրանց համար փոխարինում է մարդկանց հետ շփմանն ու կապվածության զգացմանը: Նրանք ավելի ու ավելի շատ են ձեռք բերում և դժվար են բաժանվում որևէ առարկայից: Հավաքածուն իմաստավորում է նրանց կյանքը և փրկում մենությունից: Այս տեսակի մարդկանց համար փողն արժեք է՝ որպես արվեստի գործ, ընդ որում՝ մասնագիտությունը դեր չի խաղում. հաճախ կուտակումը դառնում է հիմնական գրադարձը:

Փողը կարելի է օգտագործել **իշխանություն** ու գերազացություն ձեռք բերելու համար: Մարդը փողով կարող է զնել դատավորների կողմնակալությունը, հակառակորդների չեզոքությունը, ընտրազանգվածի ձայները՝ ուղի հարթելով իր համար: Փողի օգնությամբ իշխանություն փնտրողների մեջ առանձնացնում են տարբեր տեսակներ, որոնց գրականության մեջ պայմանականորեն անվանում են.

*ա. Զեռնածումներ:* Փողի միջոցով օգտագործում են ուրիշների սնապարծությունն ու ազահությունը: Զեռնածությունը նրանց քոյլ է տալիս լուծել իրենց խնդիրները՝ բոլորովին խոճի խայթ չզգալով դիմացիների խարելու համար:

*թ. Կայսրություն կառուցողներ:* Օժտված են (կամ ձևացնում են, թե օժտված են) ինքնուրույնությամբ ու ինքնավստահությամբ: Շնչելով կամ ժխտելով իրենց կախվածությունն ուրիշներից՝ նրանք ձգտում են վերջիններին կախվածության մեջ գցել իրենցից:

*գ. Կնքահայրեր:* Փողն օգտագործում են կաշառների ու վերահսկողության համար՝ ձեռք բերելով առավելության զգացում:

Փողը հաճախ օգտագործվում է **սեր**, կապվածություն, նվիրվածություն ու հարգանք գնելու համար: Փողը սիրո խորիրդանիշ համարողների միջավայրում առանձնացվում է անձի սոցիալական 3 տեսակ.

*ա. Սեր գնողներ:* Փորձում են «զնել» սեր ու հարգանք, իրենց չսիրված են զգում և աշխատում են խուսափել թշվառության ու ոչնչության օգացնումից՝ մյուսներին կաշառելով թվացյալ առատաձեռնությամբ։ Սակայն նրանք դժվար են ընդունում պատասխան սերը, իսկ առատաձեռնությունը երբեմն միայն քողարկում է իրական թշնամանքը նրանց հանդեպ, ումից կախում ունեն։

*բ. Սեր վաճառողներ:* Ուրիշներին խոստանում են սեր, կապվածություն և զերմություն, որը բավարարում է նրանց ինքնասիրությունը։ Նրանք հեշտությամբ են ցուցադրում այդպիսի վարք և, բնականաբար, գրավում են սիրո գնորդներին։

*գ. Սիր գողեր:* Սեր են տենչում, թեև զգում են, որ դրան արժանի չեն։ Փորձում են ոխակի դիմել այլ ոլորտներում, իսկ սիրային հարաբերություններում իրենց շատ կաշկանդված են պահում։

Հնարավոր է, որ այս բոլոր «սիրային գործիչների» ծնողները նրանց փող են տվել ոչ թե հանուն սիրո, այլ սիրո փոխարեն։ Քանի որ նրանք չգիտեն, որ կարելի է անաշառ սիրել, ստիպված գնում, վաճառում կամ գողանում են սերը։

Փողին տրվող առավել ընդունելի և տարածված բնութագրությունն ազատությունն է<sup>11</sup>։ Փողը տալիս է ընտրելու հնարավորություն, հարաբերական անկախություն, ժամանակ, որը կարելի է վատնել սեփական հետաքրքրություններն ու հակումները բավարարելու նպատակով և այլն։

Գոյություն ունի «փողային ազատության» երկրպագուների 2 տեսակ.

*ա. Ազատության գնորդներ:* Նրանց համար փողը նշանակում է ազատագրում կանոններից, պարտականություններից ու նույնիսկ խնդրանքներից, որոնք սահմանափակում են ինքնուրույնությունն ու անկախությունը։ Նրանք փողի միջոցով ձգտում են ազատության, ճնշում կախվածությանն իրենց մղումը։ Փողը նրանց հաճախ դարձնում է անպատասխանատու և անհուսալի, ինչն ընկերների շրջանում առաջանում է վիրավրանք ու զայրույթ։

*բ. Ազատության համար պայքարողները* մերժում են փողը և այն ամենը, ինչը դառնում է մարդկանց շահագործման միջոց։ Նրանք հաճախ դառնում են քաղաքական արմատականներ, հիպիսներ կամ տեխնոլոգաներ։ Ընկերությունն ու մտերմությունը նրանց գլխավոր գենքն են փողի դեմ պայքարում։ Նրանց իդեալիզմը հույզերից պաշտպանվելու փորձ է։ Հաճախ դառնում են կրոնական աղանդների կամ ահարեկչական կազմակերպությունների գոհ։

Փողն ազատության խորհրդանիշ է նաև խաղամոլի համար։ *Խաղամոլությունը* փողային ախտաբանության ամենատարածված տեսակներից է։ Խաղամոլը խաղի ընթացքում ունենում է զգացմունքների հատուկ սրացում, կամքի լարում, քանի որ փողային հաջողությունը կապված է բախտի, ճշգրիտ հաշվարկի գործոնների հետ։

Շատերին ակնհայտ է թվում այն հարցի պատասխանը, թե ինչո՞ւ են մարդիկ մոլախաղերով (ազարտային խաղերով) տարվում։ հեշտ փող

<sup>11</sup> Այդ մասին տես՝ նաև **Мартыненко В.**, Социальная философия денег, “Вопросы философии”, 2008, N 11, էջ 152։

շահելու և զվարճանալու համար: Սակայն հոգեվերլուծաբանները պնդում են, որ որոշ մարդիկ, ընդհակառակը, խաղում են պարտվելու համար: Եվ փորձառական դեպքերն իսկապես հաստատում են այդ պարադոքսալ տեսակետը: Ըստ Ս. Ֆերենցիի՝ յուրաքանչյուրին, ով երբեւ խաղացել է խաղատանը կամ բորսայում (սակարան), ծանոթ է հաջողության բացարձակ վստահության զգացումը, որը «մանկամիտ ամենազորության» արձագանքն է: Ֆերենցին համոզված էր, որ մանուկներն իրենց զգում են ոչ թե թույլ ու անօգնական, այլ իշխանության տեր ու հզոր էակներ, որոնց պահանջմունքները բավարարվում են լիովին իրենց ենթարկվող, աշխարհում ինքնուրույն նշանակություն չունեցող մեծահասակներով: Նման անիրատեսական ինքնազնահատականի ձևավորման պատճառն այն է, որ նրանք իրենց իսկական բոլությունը, կախվածությունն ու անօգնականությունը նկատելու հնարավորություն չունեն: Ժամանակի ընթացքում բախվում են իրականությանը, երբ բացասական ապրումները բացահայտում են «կյանքի ճշմարտությունը»: Հասունություն նշանակում է ոչ միայն սեփական հնարավորությունների, այլև դրանց սահմանափակության ըմբռնում: Մեզնից շատերը կորցնում են ամենազորության զգացումը վաղ մանկական տարիքում, բայց ժամանակ առ ժամանակ դա վերակենդանանում է, եթե հատկապես ձգուում ենք ինչ-որ բանի՝ համոզված լինելով, որ կարող ենք ստանալ: Դրանով էլ բացարկում է խաղամոլի կիրքը. նա իրեն պատկերացնում է գուշակի դերում՝ վստահ, որ տեսնում է համարները, որոնք պետք է դրւու զան: Մինչդեռ հաջողության ցանկացած հավանականությանը հակասող այդ համար հույսի հետևում թաքնվում է պարտության ձգուումը: Բնականաբար, ոչ բոլոր խաղամոլներն են նյարդային: Միլիոնավոր մարդիկ կանոնավոր այցելում են ձիարշավարան, մասնակցում են վիճակախաղի, ժամանակ են անցկացնում թղթախաղի սեղանի կամ խաղային մեքենաների առջև: Դա թույլ է տալիս ապրել ռիսկի ու նոյենության (ազարտ) հուզիչ զգացում և կարծ ժամանակով պատրանք է ստեղծում, թե կյանքում կարելի է ծեռք բերել ավելին, քան ունեն:

Թեև գոյություն ունեն խաղամոլների հոգեխստաբանության վերաբերյալ մեծարանակ աշխատություններ, սակայն շատ քիչ հեղինակներ են հետաքրքրվել «նորմալ»՝ խաղի կրով չհամակված խաղամոլների հոգեբանությամբ: Առաջին անգամ խաղի հանդեպ ախտածին կրի դեպքը դիտարկել է Զ. Ֆրոյդը (1856-1939) Դոստոևսկու մասին էսսեում: Նա կապում էր խաղի կիրքը, ինչպես և մյուս կայշունության ախտանշանները էղիպյան բարդույթի հետ: Ըստ Էության՝ խաղով համակվածության հոգեվերլուծական մեկնաբանության հիմքն այն զաղափարն է, որ խաղամոլի առաջնոհի ուժը պարտվելու, իրեն անարդարության զի զգալու, զգջում ու խղճի խայր ապրելու անգիտակցական ցանկությունն է: Նման վարքի ակունքները մանկության շրջանում են՝ ծնողների հետ երեխայի փոխհարաբերությունների խախտման մեջ: Խաղը կարող է լինել մայրական սերը վերադանելու եղանակ, մոր հանդեպ անքույլատրելի զգացմունքների համար պատժվելու կամ իրականությունը «քեստավորելու» միջոց:

Բացի հոգեվերլուծական տեսությունից, գոյություն ունեն նաև այլ տեսություններ, որոնք խաղամոլների վարքը բացարկում են նրանց անձ-

նային առանձնահատկություններով: Այսպես՝ Ե. Հոֆմանը խաղը դիտարկում է որպես առօրյա կյանքից անհետացած ոխսկային իրավիճակների փոխարինիչ: Նա ընդգծում է, որ մարդիկ, որոնց մասնագիտությունները կապված են շատ մեծ կամ շատ փոքր ոխսկերի հետ, ընտրում են ոխսկային խաղերը: Խոկ նրանք, ում մասնագիտական գործունեությունն ուղեկցվում է միջին ոխսկով, նախընտրում են ոխսկի չփառել խաղի ժամանակ: Այդ տվյալները հաստատում է նաև S. Լոզկովսկին, ում կարծիքով ոխսկային խաղերը նախընտրում են էքստրավերտները և մարդիկ, ովքեր արտաքին սենսորային խթանման կարիք ունեն:

Բացի հոգեբանական գործուններից, խաղամոլի վարքը կարող է պայմանավորված լինել ժողովրդագրական, սոցիոմշակութային և իրավիճակային գործուններով: 1995 թ. Մ. Ուլկերը փորձեց միավորել բոլոր այդ գործունները: Նրա կարծիքով խաղի հանդեպ մարդու նախատրամադրվածությունը որոշվում է հետևյալ հանգամանքներով. *մշակութային կարծրատիպերով*, որոնք կարող են հավանություն տալ կամ նույնիսկ թելադրել խաղի տարբեր ձևեր, *ոեթերենս խմբերով*, որոնք կարող են գործածել որոշակի խաղային վարք, *սոցիալական ուսուցմամբ*, *անձի անհատական տարրերություններով*, *ճգնաժամով ու սրբեսով*, որոնց դեպքում խաղը կօգտագործվի որպես փոխհատուցման մեխանիզմ: Խաղը կարող է լինել նաև *հանգստի և ժամանցի ձև*, կիրառվել *իրականության ուսումնասիրության և ճանաչողական նպատակներով*:

Թեև փողային խանգարումների վերաբերյալ ուսումնասիրությունների մեծ մասը հիմնված է բավական ծանր ախտաբանությամբ կլինիկական դեպքերի վրա, շատ «նորմայ» մարդիկ կարող են ունենալ նույն խնդիրներն ավելի թերեւ ձևով: Յուրաքանչյուրն էլ ճանաչում է չափազանց տնտեսող կամ նույնիսկ ժլատ, իրենց ամեն ինչից գրկող, ինչպես և անզգույշ ու վատնող, անբնդիատ պարտբերի մեջ խրվող մարդկանց: Փողային պարողգիայի վերաբերյալ գրականությունը ցույց է տալիս, որ փողը կարող է խորհրդանշել անվտանգության, ազատության, իշխանության ու սիրո պահանջնունքները, սակայն չի կարող մինչև վերջ բավարարել դրանք: Եվ քանի որ շատ մարդիկ ենթադրում են, որ այդ պահանջնունքների բավարարման հարցում իրենց անհաջողությունները փողի պակասի պատճառով են, նրանք կրկնապատկում են ջանքերը, որպեսզի ավելի շատ վաստակեն: Այսպիսով՝ փակ շրջանը, որում նրանք գտնվում են, աստիճանաբար նեղանում է, և թերև շեղումը ծանր խանգարմամբ փոխարինվելու միտում է ստանում:

**СОФЬЯ ОГАНЯН – Особенности денежной патологии.**  
**Денежная типология личности.**– Деньги – основное средство экономического обмена, платежа и формирования накоплений, мера стоимости, поэтому для специалистов экономической психологии особое значение имеет та проблема, как на сознание и поведение людей ежедневно действует необходимый компонент их экономической жизни.

Целью большинства психологических исследований в денежно-финансовой сфере является демонстрация того, что люди ведут себя вовсе неrationально по отношению к деньгам. То, как они их зарабатывают, тратят, дарят, хранят и берут в долг, иногда совершенно противоречит всем экономическим аксиомам. Люди часто совершают ошибки по причине незнания экономических законов, а в случае неврозов и зависимостей поступают себе во вред.

Несмотря на то, что большая часть исследований в области денежных расстройств основана на клинических случаях довольно тяжёлых патологий, многие "нормальные" люди могут испытывать те же проблемы в более лёгкой форме. Изучение денежной патологии показывает, что деньги могут символизировать потребности в безопасности, свободе, власти и любви, однако они не могут до конца удовлетворить эти потребности.

**SOFYA OHANYAN – *Peculiarites of money deviation. Money pathology of an individual.*** – Money is the basic means of exchange in economic relations, and also the basic means of payment, that is why specialists of economic psychology are interested in this problem, how money influences people's consciousness and behaviour which is a necessary component in their economic life.

The psychological investigations made in financial field have a purpose to show that people are not rational concerning money. People earn, spend, save and borrow money which sometimes contradict to economic axioms. People often make mistakes because they don't know the economic laws.

The investigations of money impediments are based on clinical accident, but also "normal" people can have the same problem in an easier way. The investigation of money deviation shows that money can symbolize the necessities of security, freedom, power and love, but money can't completely satisfy these necessities.